ԿՈՌՈՒՊՑԻՈՆ ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԱՆԴՐԱԶԳԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՎԱԾ ՀԱՆՑԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ. ԿՈՌՈՒՊՑԻՈՆ ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԿԱԶՄԱԿԵՐՊՎԱԾ ՀԱՆՑԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԴԵՄ ՊԱՅՔԱՐԻ ՔՐԵԱԴԱՏԱՎԱՐԱԿԱՆ ԳՈՐԾԻՔԱԿԱԶՄԸ

ԴԱՍ 1

ԿՈՌՈՒՊՑԻՈՆ ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԱՆԴՐԱՁԳԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՎԱԾ ՀԱՆՑԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ. ԿՈՌՈՒՊՑԻՈՆ ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԿԱԶՄԱԿԵՐՊՎԱԾ ՀԱՆՑԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԴԵՄ ՊԱՅՔԱՐԻ ՔՐԵԱԴԱՏԱՎԱՐԱԿԱՆ ԳՈՐԾԻՔԱԿԱԶՄԸ

«Հեռաուսուցման դասընթացների մշակում Արդարադատության ակադեմիայի համար» ծրագիրը ֆինանսավորվել է ԱՄՆ Պետքարտուղարության Թմրամիջոցների դեմ պայքարի և իրավապահ համագործակցության բյուրոյի կողմից և իրականացվել է «ՓԻ-ԷՅՉ Ինթերնեշնլ» կազմակերպության կողմից՝ Արդարադատության ակադեմիայի հետ գործընկերությամբ: Սույն նյութում արտացոլված են հեղինակների տեսակետները, մեկնաբանությունները և եզրակացությունները, որոնք կարող են չհամընկնել ԱՄՆ Պետքարտուղարության տեսակետների հետ:

ՆԱԽԱԲԱՆ

ԴԱՍԸՆԹԱՑԻ ՆՅՈՒԹԻ ՅՈՒՐԱՔԱՆՉՅՈՒՐ ԲԱՂԱԴՐԻՉԻ ՀԱՄԱՐ ՆՇՎԱԾ ԵՆ ԺԱՄԱՆԱԿԱՅԻՆ ՑՈՒՑՈՒՄՆԵՐ ԵՎ ԲՈՎԱՆԴԱԿԱՅԻՆ ՀՐԱՀԱՆԳՆԵՐ:
ՀԵՏԵՎԵՔ ԴՐԱՆՑ:

Նախաբանի արդյունավետ յուրացման համար պետք է նախատեսել մոտ 15 րոպե ժամանակ:

Սույն դասընթացը նախատեսված է դատավորների, ինչպես նաև արդարադատության համակարգի այլ աշխատողների համար: Այն Ձեզ հնարավորություն կտա ծանոթանալու կոռուպցիոն հանցագործությունների և անդրազգային կազմակերպված հանցավորության էությանը, նշված հանցագործությունների դեմ պայքարի միջազգային իրավական չափանիշներին, ներպետական նյութական և դատավարական օրենսդրական կարգավորումներին, գործնականում առկա խնդիրներին:

Դասընթացը բովանդակում է վերոնշյալ հարցերի լուսաբանմանը նվիրված թեմաներ՝ կոռուպցիոն հանցագործությունների և անդրազգային կազմակերպված հանցավորության դեմ պայքարի գործիքակազմը, կոռուպցիոն հանցագործությունների շրջանակը, կոռուպցիոն հանցագործությունների սուբյեկտային կազմը, հանցավոր ճանապարհով ստացված գույքի տնօրինման խնդիրները, նշված հանցագործությունների համար քրեական պատասխանատվության նախապայմանները, քրեական վարույթ նախաձեռնելու և քրեական գործի քննության և ապացույցների ձեռքբերման դատավարական առանձնահատկությունները՝ համեմատականներ անցկացնելով ՀՀ քրեական և քրեական դատավարության գործող և նոր օրենսգրքերով տրված լուծումների միջև:

Յուրացնելով սույն դասընթացի նյութը և պատասխանելով ինքնաստուգիչ հարցերին՝ Դուք

- Կունենաք ամբողջական գիտելիք կոռուպցիոն հանցագործությունների և անդրազգային կազմակերպված հանցավորության, դրանց շրջանակի և սուբյեկտային կազմի, կոռուպցիոն հանցագործությունների արդյունքում ստացված գույքի տնօրինման, խնդրո առարկա հանցագործությունների վերաբերյալ քրեական վարույթի նախաձեռնման, ապացույցների ձեռքբերման, ապացուցման բեռի բաշխման, վկաների և տուժողների իրավունքների ու շահերի իրավաչափ պաշտպանության հիմնախնդիրների և լուծումների վերաբերյալ:

- Կկարողանաք հստակ որակել կոռուպցիոն հանցագործությունները, լիարժեքորեն կպատկերացնեք կոռուպցիոն հանցագործությունների և անդրազ-

գային կազմակերպված հանցավորության դեմ պայքարի քրեաիրավական և քրեադատավարական հիմնախնդիրները:

- Կծանոթանաք կոռուպցիայի դեմ պայքարի առաջանցիկ միջազգային փորձին և քաղված դասերին: Կոնկրետ դեպքերի վերլուծությունների միջոցով կկարողանաք մասնագիտական եզրահանգումներ անել և տեսակետներ առաջադրել կոռուպցիոն հանցագործությունների և անդրազգային կազմակերպված հանցավորության դեմ պայքարի քրեաիրավական և քրեադատավարական հիմնախնդիրների շուրջ:

- Կկարողանաք տարբերակել կոռուպցիոն հանցագործությունների համար քրեական պատասխանատվության ենթարկելու նախապայմանները, հանցագործությունների դեմ պայքարի գործիքակազմը և նշված պայքարի կազմակերպաիրավական նախադրյալները:

- Կկարողանաք ճիշտ կիրառել նշված հանցագործություններով քրեական վարույթ սկսելու առանձնահատկությունները, ապացույցների ձեռքբերման հիմնական դատավարական միջոցները, ձեռնարկել վկաների և տուժողների իրավաչափ շահերի պաշտպանության միջոցներ:

- Կկարողանաք ամբողջությամբ կիրառել նյութը և առաջադրել նոր հիմնախնդիրներ:

Սույն դասընթացի թեմաների յուրացման համար անհրաժեշտ են գիտելիքներ ԲՈՒՀ-երի իրավաբանական ֆակուլտետների մասնագիտական առարկաներից, այդ թվում՝ բազային գիտելիքներ քրեական և քրեական դատավարության իրավունքներից:

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

ԴԱՍԸՆԹԱՑԻ ՆՅՈՒԹԻ ՅՈՒՐԱՔԱՆՉՅՈՒՐ ԲԱՂԱԴՐԻՉԻ ՀԱՄԱՐ ՆՇՎԱԾ ԵՆ ԺԱՄԱՆԱԿԱՅԻՆ ՑՈՒՑՈՒՄՆԵՐ ԵՎ ԲՈՎԱՆԴԱԿԱՅԻՆ ՀՐԱՀԱՆԳՆԵՐ:
ՀԵՏԵՎԵՔ ԴՐԱՆՑ:

Ներածության արդյունավետ յուրացման համար պետք է նախատեսել մոտ 15 րոպե ժամանակ:

Վերջին մի քանի տասնամյակների ընթացքում ավելի ու ավելի հաճախ է խոսվում կոռուպցիայի տարածվածության և հետևաբար՝ դրա դեմ պայքարի անհրաժեշտության մասին: Զուգահեռաբար լայն տարածում է ստանում կազմակերպված հանցավորությունը՝ ներառելով նոր բնագավառներ և ուղղություններ, տարածվելով կենսագործունեության տարբեր ոլորտներում:

Հանցագործությունների այս տեսակների դեմ պայքարը համաշխարհային հանրության գլոբալ խնդիրներից մեկն է: Այս երևույթներն այս կամ այն չափով առկա են ցանկացած պետությունում և գնալով խորացնում են հակասությունները պետության և հասարակության միջև: Դրանք էապես խոչընդոտում են հասարակության զարգացմանը, քանի որ ստեղծում են անհաղթահարելի պայմաններ հասարակության սոցիալ-տնտեսական զարգացման համար:

Դրանով է պայմանավորված կոռուպցիայի և կազմակերպված հանցավորության դեմ պայքարի հրատապությունը, արդյունավետ պայքարի համար անհրաժեշտ կազմակերպահիրավական նախադրյալների ձևավորումը, մասնավորապես՝ նյութական և դատավարական օրենսդրության մեջ առկա բացերի հաղթահարումը, գործնական հիմնախնդիրների վերհանումը և համարժեք լուծումների ուրվագծումը:

Դասընթացն ունի թեմատիկ տրամաբանական կառուցվածք: Այն սկզբնապես անդրադառնում է կոռուպցիոն հացագործությունների և անդրազգային հանցավորության դեմ պայքարի անհրաժեշտությանը, առկա ներպետական և միջազգային գործիքակազմին, որից հետո անցում է կատարվում ՀՀ քրեական և քրեական դատավարության գործող և նոր օրենսգրքերում տեղ գտած կարգավորումների լույսի ներքո նյութական և դատավարական օրենսդրության մեջ առկա խնդիրներին և բացթողումներին: Մասնավորապես, առաջին դասում ներկայացվում է նշված հանցագործությունների դեմ պայքարի գործիքակազմը, միջազգային իրավական պահանջները, ՀՀ ներպետական օրենսդրության հիմքերը: Երկրորդից չորրորդ դասերում համապատասխանաբար տրամաբանական հաջորդականությամբ ներկայացված են կոռուպցիոն հանցագործությունների շրջանակը և դրանց սուբյեկտային կազմի առանձնահատկությունները: Հինգերորդ դասը նվիրված է դասընթացի առնչությամբ թերևս ամենաարդիական հարցերից մեկին՝ կոռուպցիոն հանցոգոր-

ծությունների արդյունքում ձեռքբերված գույքի տնօրինման կարգավորումներին՝ ներպետական և միջազգային լուծումների լույսի ներքո:

Վեցերորդ դասը հատուկ ուշադրություն է դարձնում այս հանցագործությունների վերաբերյալ դեպքերով քրեական գործ հարուցելու առանձնահատկություններին՝ անդադառնալով նաև ազդարարների ինստիտուտի և քրեադատավարական կարգավորումների հարաբերակցության խնդրին: Յոթերորդ դասն անդրադառնում է նշված հանցագործությունների դեմ պայքարի կազմակերպահրավական նախադրյալներին՝ շեշտադրելով խնդրո առնչությամբ ՀՀ ներպետական վերջին ինստիտուցինալ զարգացումները՝ կոռուպցիայի դեմ պայքարի մասնագիտացված համակարգ ձևավորելու նպատակի համատեքստում:

Ութերորդ և իններորդ դասերը համապատասխանաբար բացահայտում են նշված հանցագործությունների դեմ պայքարի դատավարական հիմնախնդիրները: Այդ դասերն անդրադառնում են նշված հանցագործությունների վերաբերյալ գործերով ապացույցների ձեռքբերմանն ուղղված քննչական և այլ դատավարական գործողության կատարման առանձնահատկություններին և կոռուպցիոն առանձին հանցագործություններով ապացուցման բեռի բաշխման առանձնահատկություններին այն մոտեցմամբ, որ ապացուցման որոշակի բեռ կարող է դրվել նաև պաշտպանության կողմի վրա:

Տասներորդ դասը հատուկ անդրադարձ է կատարում խնդրո առարկա հանցագործությունների վերաբերյալ գործերով վկաների և տուժողների պաշտպանության դատավարական մեխանիզմներին:

ԴԱՍ 1

ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԵՎ ԱՆԴՐԱԶԳԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՎԱԾ ՀԱՆՑԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԴԵՄ ՊԱՅՔԱՐԻ ԳՈՐԾԻՔԱԿԱԶՄԸ

ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ

Այս դասը կազմված է հետևյալ 4 բաղադրիչներից.
մոտիվացնող ներածական տեսանյութ,
դասի տեսական նյութ,
բառարան և
ինքնաստուգիչ հարցեր:
Բոլոր բաղադրիչների յուրացման համար
Ձեզ հարկավոր է 4 ժամ:

Ինքնաստուգիչ հարցերը և բացատրություններով ուղեկցվող դրանց պատասխանները ներառված չեն այս ձեռնարկում:

ՄՈՏԻՎԱՑՆՈՂ ՆԵՐԱԾԱԿԱՆ ՏԵՍԱՆՅՈՒԹ



Տեսանյութն ուշադրությամբ ուսումնասիրելու համար անհրաժեշտ է մոտ 5 րոպե:

Ուշադրությամբ կարդացեք դասի տեսական մասը՝ օգտվելով բառարանից, և այն յուրացնելուց հետո միայն պատասխանեք ինքնաստուգիչ հարցերին:
Այս աշխատանքների համար անհրաժեշտ է մոտ 170 րոպե:

Ծանոթացեք կոռուպցիայի տարբեր ձևակերպումների:

Կոռուպցիայի դեմ պայքարի իրականացումը, առաջին հերթին, ենթադրում է դրա իրավական հիմքի հստակեցում: Այդ առումով առաջնահերթ նշանակություն ունեն միջազգային այն փաստաթղթերը, որոնք կանոնակարգում են կոռուպցիոն վարքագծին տրվող արձագանքի ձևերը: Այդ փաստաթղթերից առավել հայտնիներն են՝ Կոռուպցիայի դեմ ՄԱԿ-ի կոնվենցիան, Կոռուպցիայի մասին քաղաքացիական իրավունքի կոնվենցիան և Կոռուպցիայի մասին քրեական իրավունքի կոնվենցիան:

Վերջին մի քանի տասնամյակների ընթացքում ավելի ու ավելի հաճախ է խոսվում կոռուպցիայի տարածվածության, և հետևաբար դրա դեմ պայքարի անհրաժեշտության մասին: Այնուհանդերձ, ոչ մի միջազգային իրավական ակտում կոռուպցիայի միասնական բնորոշում տրված չէ: Միակ բացառությունը, թերևս, Եվրոպայի խորհրդի՝ Կոռուպցիայի մասին քաղաքացիական իրավունքի կոնվենցիան է, որը սահմանում է հետևյալը. «Սույն Կոնվենցիայի նպատակների համար

«կոռուպցիա» նշանակում է՝ ուղղակիորեն կամ անուղղակիորեն կաշառք կամ որևէ անհիմն օգուտ կամ այդպիսի օգուտի խոստում պահանջելը, առաջարկելը, տալը կամ ընդունելը, որը խախտում է կաշառք, անհիմն օգուտ կամ այդպիսի օգուտի խոստում պահանջողի կողմից ցանկացած պարտականության պատշաճ կատարումը կամ պահանջվող վարքագիծը»: Այնուհանդերձ, հենց այս բնորոշումից հետևում է, որ կոռուպցիայի ներկայացված ձևակերպումը վերաբերում է միայն նշված կոնվենցիային:

Կոռուպցիայի ներկայացված ձևակերպման ոչ լիարժեքության վկայությունն է նաև Կոռուպցիայի դեմ պայքարի ՄԱԿ-ի կոնվենցիան, որի դրույթներից հետևում է, որ կոռուպցիոն վարքագիծ պետք է դիտվի ոչ միայն կաշառակերությունը, այլև, օրինակ, փողերի լվացումը, ապօրինի հարստացումը, պաշտոնեական դիրքի չարաշահումը, պաշտոնատար անձի կողմից յուրացումը, ազդեցության շահարկումը և այլն:

«Թրանսփարենսի ինթերնեշնլ» կազմակերպության կողմից կոռուպցիան սահմանվում է այսպես. վստահված իշխանության չարաշահում՝ անձնական շահ ստանալու նպատակով:

ՀՀ 2015թ.-ի հակակոռուպցիոն ռազմավարության և դրա իրականացման միջոցառումների ծրագրում ներկայացված է կոռուպցիայի հետևյալ բնորոշումը՝ «կոռուպցիան անձնական կամ այլ շահադիտական նպատակով տարբեր ձևերով արտահայտված (գործողությամբ կամ անգործությամբ) ի պաշտոնե տրված իշխանական լիազորությունների չարաշահումն է»: Կոռուպցիան որպես վստահված իշխանության չարաշահում ունի մի շարք դրսևորումներ և բազում «նրբերանգներ», որոնցից են կաշառակերությունը՝ կաշառք ստանալը, տալը, կաշառքի միջնորդությունը, շորթումը, հովանավորչությունը, պաշտոնական դիրքի կամ կապերի չարաշահումը, պաշտոնեական լիազորությունները չարաշահելը կամ անցնելը, պաշտոնական կեղծիքը, պաշտոնական դիրքի օգտագործմամբ պետական սեփականության յուրացումն ու վատնումը, ինչպես նաև պաշտոնեական այլ չարաշահումները: Մասնավորապես, Կոռուպցիայի դեմ ՄԱԿ-ի կոնվենցիայի 5-րդ հոդվածի համաձայն՝

«1. Յուրաքանչյուր Մասնակից պետություն, իր իրավական համակարգի հիմնարար սկզբունքներին համապատասխան, պետք է մշակի և իրականացնի կամ վարի հանրության մասնակցությանը և օրենքի գերակայության սկզբունքների արտացոլմանը, պետական գործերի և պետական գույքի պատշաճ կառավարմանը, ազնվությանը և անկաշառությանը, թափանցիկությանը և պատասխանատվությանը նպաստող՝ կոռուպցիայի հակազդման արդյունավետ, համակարգված քաղաքականություն:

2. Յուրաքանչյուր Մասնակից պետություն պետք է ձգտի սահմանել և խրախուսել կոռուպցիայի կանխարգելմանն ուղղված պրակտիկայի արդյունավետ տեսակները:

3. Յուրաքանչյուր Մասնակից պետություն պետք է ձգտի պարբերաբար գնահատել համապատասխան իրավական փաստաթղթերը և վարչական միջոցները՝ կոռուպցիայի կանխարգելման և դրա դեմ պայքարի տեսանկյունից դրանց համարժեքությունը որոշելու նպատակով:

4. Մասնակից պետությունները, համապատասխան դեպքերում և իրենց իրավական համակարգերի հիմնարար սկզբունքներին համապատասխան, պետք է փոխգործակցեն միմյանց և համապատասխան միջազգային և տարածաշրջանային կազմակերպությունների հետ սույն հոդվածում նշված միջոցների մշակմանը և իրականացմանն աջակցելու գործում: Այդ փոխգործակցությունը կարող է ներառել մասնակցությունը կոռուպցիայի կանխարգելմանն ուղղված միջազգային ծրագրերին և նախագծերին:

Իսկ նույն Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *«1. Յուրաքանչյուր Մասնակից պետություն, իր իրավական համակարգի հիմնարար սկզբունքներին համապատասխան, պետք է ապահովի մարմնի կամ, անհրաժեշտության դեպքում, մարմինների առկայությունը, որոնք իրականացնում են կոռուպցիայի կանխարգելում այնպիսի միջոցների օգնությամբ, ինչպիսիք են.*

ա) սույն Կոնվենցիայի 5-րդ հոդվածում նշված քաղաքականության իրականացումը և, համապատասխան դեպքերում, այդպիսի քաղաքականություն իրականացման հսկողությունը և համակարգումը.

բ) կոռուպցիայի կանխարգելման հարցերով գիտելիքներն ընդլայնելը և տարածելը»:

Ժամանակակից «սպիտակ օձիքավորները», որպես կանոն, բարձրագույն կրթություն ստացած, տնտեսությունից, ֆինանսներից, տեղեկատվական տեխնոլոգիաներից (ՏՏ) լավ տեղեկացված անձինք են: Նրանք լայն հնարավորություն ունեն օգտագործելու տեխնոլոգիաները և մասնագիտացված տեղեկությունները: Նշվածը կարող է օգտագործվել ֆինանսական բնույթի հանցագործություններ կատարելու և միաժամանակ դրանք քողարկելու համար: Դրանց դեմ պայքարի համար անհրաժեշտ է լինում անպայման օգտագործել հատուկ մեթոդներ, որոնք համահունչ են այդ հանցագործությունները կատարելու մեթոդներին: Այսինքն, առանձնակի ուշադրություն պետք է դարձնել էլեկտրոնային դիտարկումներին, քանի որ այս միջոցների հնարավորությունները մի քանի անգամ ավելին է, քան այլ միջոցներինը: Էլեկտրոնային միջոցները նախաքննության մարմիններին հնարավորություն են տալիս ստանալ հավաստի ապացույցներ ֆինանսական հանցագործությունների նախապատրաստման և կատարման մասին: Այն նաև հնարավորություն է տալիս նախապես տեղեկություններ ստանալ կազմակերպիչների մասին և կանխել նրանց գործունեությունը:

Ֆինանսական կոռուպցիոն բնույթի հանցագործությունների քննության համար կարևոր են նաև գաղտնի գործողությունների կատարումը՝ վերահսկելի մատակարարում, ներքին և արտաքին դիտումները:

Ֆինանսական միջոցառումների աշխատանքային խմբի (ՖԱԹՖ) հանձնարարականների համաձայն՝ ֆինանսական բնույթի հանցագործությունների դեմ պայքարի համար կարևոր է նաև ***հաճախորդների ստուգումը***: Սա նշանակում է, որ ֆինանսական մարմինները պետք է ստուգեն իրենց հաճախորդների ներկայացրած տվյալները:

Ֆինանսական հաստատություններից պետք է պահանջվի իրականացնել հաճախորդի պատշաճ ուսումնասիրության (ՀՊՈՒ) միջոցառումներ, երբ. (1) հաստատվում են գործարար հարաբերություններ, (2) կատարվում են միանգամյա գործարքներ, որոնք.

Փորձեք հիշել այն իրավիճակները, որոնց պարագայում ֆինանսական հաստատություններից պահանջվում է իրականացնել հաճախորդի պատշաճ ուսումնասիրության (ՀՊՈՒ) միջոցառումներ: Ապա շարունակեք ընթերցելը նյութը և ստուգեք Ձեր պատասխանների ճշգրտությունը:

1 գերազանցում են կիրառելի նախատեսված շեմը (15.000 ԱՄՆ դոլար/եվրո), կամ

2 դրամական փոխանցումներ են՝ Հանձնարարական 16-ի Բացատրական մեկնաբանությամբ նախատեսված հանգամանքներում, կամ

3 առկա է փողերի լվացման կամ ահաբեկչության ֆինանսավորման կասկած, կամ

4 ֆինանսական հաստատությունը կասկածներ ունի հաճախորդի նույնականացման նպատակով նախկինում ձեռք բերված տվյալների իսկության կամ համարժեքության վերաբերյալ[1]:

Կոռուպցիայի դեմ պայքարում կարևորագույն նշանակություն ունի կանխարգելումը, ինչի շրջանակներում կարևորվում են էթիկայի նորմերի ընդունումը, աշխատանքի ընդունելու թափանցիկ և արժանիքների վրա հիմնված ընթացակարգեր սահմանելը, գնումների մրցակցային և բաց ընթացակարգերը, շահերի բախման կարգավորում, նվեր ընդունելու արգելք, եկամուտների, ծախսերի, նվերների հայտարարագրում, ձեռնարկատիրական գործունեություն ծավալելու արգելքը և այլն:

Ըստ Ձեր տեղեկացվածության՝ արդյո՞ք ՀՀ-ում առկա են կոռուպցիոն հանցագործությունների մասին համալիր տեղեկությունների հավաքագրման միջոլորտային ընթացակարգեր:

ՀՀ-ում կոռուպցիոն հանցագործությունների դեմ պայքարի համատեքստում հետաքրքրական է ՀՀ գլխավոր դատախազության՝ 2020թ.-ի ընթացքում կոռուպցիոն հանցագործությունների քննության արդյունքների վերաբերյալ հաղորդման մեջ ներկայացված վիճակագրության ուսումնասիրությունը: Ընդ որում, պետք է նշել, որ նշված հաղորդման մեջ վիճա-

1. 2014 թվականի հուլիսի 1-ի դրությամբ ՀՀ տարածքում գործող բոլոր բանկերը և ներդրումային ծառայություններ մատուցող կազմակերպությունները կամավորության սկզբունքով միացել են FATCA-ին (օտարերկրյա հաշիվների հարկային համապատասխանության ակտ)՝ գրանցվելով ԱՄՆ հարկային մարմնի հատուկ համակարգում, և փողերի լվացման դեմ պայքարի շրջանակներում հաշվետվություններ են ներկայացնում FATCA-ի մասով:

կագրական տվյալները ներկայացվել են 2019թ.-ի ՀՀ հակակառուպցիոն ռազմավարության համաձայն՝ «ՀՀ քրեական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» 25.03.2020թ.-ի ՀՀ օրենքով սահմանված՝ կոռուպցիոն հանցագործությունների ցանկին համապատասխան: Պետք է նաև նշել, որ ՀՀ գլխավոր դատախազության կողմից նման հաղորդում հրապարակելու պարտականությունն ուղղակիորեն նախատեսված է 2017թ.-ի նոյեմբերի 17-ին ընդունված՝ «Դատախազության մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 4-րդ մասով, համաձայն որի՝ ՀՀ գլխավոր դատախազությունը յուրաքանչյուր տարի՝ մինչև ապրիլի 1-ը, հրապարակում է հանցագործությունների քննության վերաբերյալ հաղորդում ՀՀ գլխավոր դատախազության կայքէջում:

Կոռուպցիոն բնույթի հանցագործությունների քննության արդյունքների վերաբերյալ տեղեկությունները, վիճակագրական տվյալները, համեմատական վերլուծությունները և եզրահանգումները ներկայացվում են առանձին:

Նախքան հաջորդ հատվածը կարդալը՝ փորձեք մտաբերել, թե ինչ տարածվածություն կարող են ունենալ կոռուպցիոն հանցագործությունները ՀՀ-ում:

Այսպես, վերը նշված հաղորդման համաձայն՝ ըստ կոռուպցիոն հանցագործությունների տեսակների՝ նախապատրաստվել է 1777 նյութ, քննվել է 2524 քրեական գործ (1):

Քննարկվող խնդրի առումով բավականին հետաքրքիր է որոշ այլ երկրների, մասնավորապես Սինգապուրի, Հոնգ Կոնգի և Վրաստանի փորձը կոռուպցիայի դեմ պայքարում ծավալած գործունեության համատեքստում:

Ստորև ծանոթացեք մի քանի օտարերկրյա պետությունների՝ կոռուպցիայի դեմ պայքարի առաջանցիկ փորձին:

Սինգապուր: Մինչև 1945թ.-ը Սինգապուրը հայտնի էր որպես կոռուպցիայի բարձր մակարդակ ունեցող պետություն, սակայն մի քանի տարվա ընթացքում վիճակը փոխվեց: Սինգապուրում կոռուպցիայի ծաղկման հիմնական

պատճառներն էին ցածր աշխատավարձերը, սահմանափակ հնարավորությունները և, իհարկե, կոռուպցիոն արարքների բացահայտմանը և դրանց համար պատասխանատվության ենթարկելուն ուղղված ոչ արդյունավետ քաղաքականությունը:

Սակայն իրավիճակը կտրուկ փոխվեց, երբ երկրում ի հայտ եկավ քաղաքական կամքը, ինչը կոռուպցիայի դեմ պայքարի առաջնային գործոնն է: Առաջին քայլը, որ ձեռնարկվեց երկրում, խիստ պատիժների և քրեական պատասխանատվության անխուսափելիության սկզբունքի ապահովումն էր: Կոռուպցիոն վարքագծի համար անձը սովորաբար ստանում էր 5 տարի ժամկետով ազատազրկում և 80 000 ԱՄՆ դոլարի չափով տուգանք:

Երկրորդ քայլը հանրային ծառայողների աշխատավարձերի բարձրացումն էր, քանի որ հանրային ծառայողները կարող են բնականոն աշխատել միայն սոցիալական երաշխիքների առկայության պարագայում:

Ամենակարևոր քայլերից մեկն անկախ կոռուպցիոն գործերի քննության գործակալության ստեղծումն էր, որն անկախ էր ոստիկանությունից և օժտված էր լայն իրավասություններով՝ կոռուպցիայի մեջ կասկածվող անձին ձերբակալելու, պատասխանատվության ենթարկելու առումով (2):

Հոնգ Կոնգ: Մինչև 1974թ.-ը Հոնգ Կոնգում կոռուպցիան մեծ ծավալների էր հասնում: Այն տարածված էր պետական ապարատի բոլոր ոլորտներում և հատկապես ոստիկանությունում: Վերջիններիս հովանու ներքո երկրում տարածված էր թմրանյութերի ապօրինի շրջանառությունը, մոլեխաղերը, շորթումները: Շատ ցածր էր հանրային վստահությունը պետական կառույցների, դատական համակարգի նկատմամբ:

Իրավիճակը կտրուկ փոխվեց 1974թ.-ին, երբ երկրում ձևավորվեց կոռուպցիայի դեմ պայքարի անկախ հանձնաժողովը՝ ICAC, որն էլ զբաղվում էր կոռուպցիոն դեպքերի քննությամբ: Այդ հանձնաժողովի կարևորագույն խնդիրները դարձան հանցավոր վարքագիծ դրսևորած անձանց պատասխանատվության ենթարկելը, կոռուպցիայի կանխարգելումը և ամենակարևորը՝ հասա-

ռակության իրազեկումը կոռուպցիայի, դրա դրսևորման և դրա դեմ պայքարի մեխանիզմների շուրջ:

Հասարակության հետ անընդմեջ համագործակցությունը, կրթական ծրագրերի իրականացումը կարճ ժամանակահատվածում հանգեցրեց հանրային պահանջատիրության մակարդակի բարձրացման, պետական կառույցների նկատմամբ վստահության ձևավորման:

Ընդ որում, Հոնգ Կոնգի և Սինգապուրի հակակոռուպցիոն մոդելները հիմք հանդիսացան նաև եվրոպական մի շարք երկրներում, այդ թվում՝ Լիտվայում և Լատվիայում համապատասխան բարեփոխումների իրականացման համար (3):

Վրաստան: Ինչպես և նախորդ պետությունները, Վրաստանը ևս երկար ժամանակ դիտարկվում էր որպես կոռուպցիայի բարձր մակարդակ ունեցող երկիր: Իրադրությունը կտրուկ փոխվեց 2012թ.-ին, երբ իշխանության եկած նոր ուժերը որպես իրենց գործունեության առաջնահերթություն դիտեցին կոռուպցիայի դեմ պայքար իրականացնելը:

Մինչ այդ Վրաստանում ծաղկող կոռուպցիայի պատճառներից էին համարվում դրա դեմ պայքար իրականացնելու քաղաքական կամքի բացակայությունը, համատարած աղքատությունը, ցածր աշխատավարձերը և գործազրկությունը, հանցավոր վարքագծի տարածման և անպատժելիության մթնոլորտի պայմանները:

Առաջին քայլերից մեկը, որն իրականացվեց նոր իշխանության կողմից՝ կոռումպացված կադրերից ազատվելու գործընթացն էր՝ թե՛ ոստիկանությունում, թե՛ իրավապահ մարմիններում և թե՛ դատական համակարգում: Դա զուգակցվեց նոր, երիտասարդ, արտերկրում կրթություն ստացած կադրերի ընդունման և վերջիններիս սոցիալական երաշխիքներ տրամադրելով:

Հաջորդ քայլոն նախաձեռնվեցին օրենսդրական փոփոխություններ, բնակչությանը ծառայություններ մատուցելու ընթացակարգերի պարզեցում, բնակչության համար դրանց հասանելիության ապահովում ու բյուրոկրատիզմի կրճատում (4):

Համեմատեք Վրաստանի և Հոնկ Կոնգի հակակոռուպցիոն պայքարի առանցքային քայլերը և փորձեք վերլուծել և եզրակացություններ անել առ այն, թե որ ռազմավարությունն եք համարում ավելի արդյունավետ և հեշտ վերարտադրելի այլ երկրներում:

Ամենակարևոր խնդիրներից մեկը դարձավ հանցավոր տարրերի դեմ պայքարը և կոռուպցիոն վարքագիծ դրսևորած անձանց քրեական պատասխանատվության ենթարկելը:

Վերջին տասնամյակների ընթացքում առավել արդիական է դառնում անդրազգային կազմակերպված հանցավորության դեմ պայքարի իրականացումը: Կազմակերպված հանցավոր խմբերը, օգտվելով պետությունների միջև սահմանների բաց լինելուց, համակարգչային տեխնոլոգիաների զարգացումից, առանձին երկրներում՝ ծաղկում ապրող կոռուպցիայից, իրենց հանցավոր գործունեությունն են իրականացնում ոչ թե մեկ, այլ մի քանի պետությունների տարածքում, զավթում են նոր շուկաներ և մեծացնում իրենց ազդեցության ոլորտը: Միաժամանակ, մեկ այլ պետության տարածքում հանցավոր գործունեություն ծավալելը դժվարացնում է հանցանքի բացահայտմանն ուղղված իրավապահ մարմինների գործունեությունը:

Ներկայումս անդրազգային կազմակերպված հանցավորությունը բնութագրվում է հետևյալ հատկանիշների առկայությամբ՝

1 բարձր, աճող եկամտաբերություն,
2 հանցավոր գործունեության գլոբալ, կայուն բնույթը,
3 օրինական գործող կառույցների հետ գործառութային նմանությունը,
4 իրավապահ մարմինների կողմից ձեռնարկվող միջոցառումներին արագ ադապտացվելը,
5 խոշոր ֆինանսանյութական միջոցների առկայությունը:

Այնուհանդերձ, անդրազգային կազմակերպված հանցավորության բնորոշումը տրված է «Անդրազգային կազմակերպված հանցավորության դեմ» ՄԱԿ-ի կոնվենցիայով (Պալերմոյի կոնվենցիա), որի 1-3-րդ հոդվածներից հետևում է, որ անդրազգային կազմակերպված հանցավորությունը ենթադրում է կազմակերպված հանցավոր խմբերի հանցավոր գործունեություն, եթե.

1 այն կատարվել է մեկից ավելի պետություններում.

2 այն կատարվել է մի պետությունում, բայց դրա նախապատրաստման, պլանավորման, ղեկավարման կամ վերահսկողության էական մասը տեղի է ունեցել այլ պետությունում.

3 այն կատարվել է մի պետությունում, բայց այնպիսի կազմակերպված հանցավոր խմբի մասնակցությամբ, որը հանցավոր գործունեություն է իրականացնում մեկից ավելի պետություններում, կամ

4 այն կատարվել է մի պետությունում, բայց դրա էական հետևանքները եղել են այլ պետությունում:

Փորձեք ինքնուրույն ձևակերպել անդրազգային կազմակերպված հանցավորությանը բնորոշող հատկանիշները՝ նախքան դրանց մասին կարդալը:

Անդրազգային կազմակերպված հանցավորության դեմ պայքարը խիստ կարևորվում է, քանի որ դրա հետևանքները կործանարար են ոչ թե սոսկ առանձին անհատների, այլև պետությունների համար: Մասնավորապես, դրանք վտանգում են երկրի տնտեսական, հասարակական, պետական անվտանգությունը, երկիրը դարձնում են առավել խոցելի, նպաստում կոռուպցիայի տարածմանը՝ դրանից բխող բոլոր բացասական հետևանքներով, ներառյալ՝ բնակչության շրջանում հանգեցնում վախի, պետական կառույցների նկատմամբ ձևավորում անվստահություն:

Ժամանակի ընթացքում փոփոխությունների են ենթարկվել նաև անդրազգային կազմակերպված հանցավորության տիպերը. եթե նախկինում առավել հայտնի էին սիցիլիական մաֆիան, ռուսական մաֆիան, ճապոնական յակուձան, չինական տրիադաները, ապա ներկայումս տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացման պայմաններում մեծ տարածում է ստացել կիբեռհանցավորությունը, դրա միջոցով մարդկանց նյութական միջոցներին տիրանալը, զարգացում է ստացել մարդկանց շահագործումը, ընդ որում, ավելանում է ոչ միայն աշխատանքային թրաֆիքինգը, այլև թրաֆիքինգը՝ մարդու մարմնի մասերին և օրգաններին տիրանալու նպատակով, կտրուկ աճում է արգելված առարկաների՝ զենքի, ռադիոակտիվ նյութերի, թմրամիջոցների և հոգեներգործուն նյութերի, կեղծված դեղորայքի, ապրանքների ապօրինի շրջանառությունը, մշակութային արժեքների (օպերացիա ՈՒԼԻՍ), կենդանական աշխարհի ներկայացուցիչների մաքսանենգությունը (օպերացիա Նաուտիլիուս), մեծ ծավալներ է ստանում հանցավոր ճանապարհով ստացված եկամուտների օրինականացումը (օպերացիա Կյուրասաո) (5):

Այս առումով անհրաժեշտ է անդրադառնալ այն գործոններին, որոնք հանդիսանում են անդրազգային կազմակերպված հանցավորության պատճառ: Դրանք բազմաբնույթ են և ներառում են ինչպես սոցիալական և տնտեսական, այնպես էլ իրավական, կազմակերպական, մշակութային պատճառներ ու պայմաններ:

Մասնավորապես, կազմակերպված հանցավորության ձևավորման և զարգացման համար նպաստավոր գործոններ են՝ տնտեսական վիճակի վատացումը, տնտեսական ճգնաժամը, ցածր աշխատավարձերը, սոցիալական երաշխիքների բացակայությունն ու գործազրկությունը, որոնց հաղթահարման նպատակով էլ անձինք ներգրավվում են հանցավոր գործունեության մեջ, նպաստում ստվերային տնտեսության զարգացմանը: Միաժամանակ, կազմակերպված գործունեության հիմքում ընկած գործոններից են՝ կոռուպցիան, պետական ապարատի ոչ արդյունավետ գործունեությունը և նրանց հանդեպ վստահության պակասը, իրավական ոչ հստակ կանոնակարգումները, օրենսդրական բացերն ու թերությունները, իրավապահ մարմինների տեխնիկական թերհագեցվածությունն ու մասնագիտական պատրաստվածության ցածր մակարդակը, բնակչության իրավական և բարոյական

գիտակցության ձևախեղումները, քաղաքական անկայունությունն ու անվերջանալի բարեփոխումները և այլն:

Կոռուպցիայի և անդրազգային հանցավորության դեմ պայքարի տեսանկյունից կարևոր է նաև միջազգային իրավական գործիքակազմը: Առկա են բազմաթիվ միջազգային պայմանագրեր, որոնք ուղղված են հենց փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարին, որոնք ինչպես կարգավորում են միջազգային վարքագծի նորմերը, այնպես էլ Հայաստանում ձևավորվող վարքագծի նորմերը: Դրանցից են օրինակ.

Փորձեք մտաբերել կոռուպցիայի և անդրազգային հանցավորության դեմ պայքարին առնչվող ՀՀ օրենսդրական ակտերը:

- 2004թ.-ի մարտի 1-ից ՀՀ համար ուժի մեջ մտած Հանցավոր ճանապարհով ստացված եկամուտների լվացման, հետախուզման, առգրավման և բռնագրավման մասին Ստրասբուրգյան կոնվենցիան, որի գլխավոր նպատակն է Եվրոպայի անդամ պետությունների և այլ պետությունների, որոնք ստորագրել են կոնվենցիան, միջազգային համագործակցության արդյունավետ համակարգի ստեղծմամբ և միջազգային մակարդակով ժամանակակից մեթոդների օգտագործման միջոցով՝ փորձել կանխել հասարակության անվտանգությանը սպառնացող հանցավոր վարքագիծը, այդ թվում հենց փողերի լվացումն ու ահաբեկչության ֆինանսավորումը:
- 2003թ.-ի սեպտեմբերի 29-ից ՀՀ-ի համար ուժի մեջ է մտել նաև Անդրազգային կազմակերպված հանցավորության դեմ ՄԱԿ-ի կոնվենցիան, որի նպատակն է՝ անդրազգային կազմակերպված հանցավորության առավել արդյունավետ կանխարգելումը և դրա դեմ պայքարի գործում պայմանավորվող կողմերի արդյունավետ համագործակցությունը:

- 2004թ.-ին ՀՀ-ի կողմից ընդունված «ՄԱԿ-ի Ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի» միջազգային կոնվենցիան, որը կրկին անդամ պետություններին միավորվելու և համատեղ ուժերով հանցագործությունները կանխելու նպատակ է հետապնդում:
- 2008թ.-ի հոկտեմբերի 1-ին ՀՀ-ն միացել է նաև Հանցավոր ճանապարհով ստացված եկամուտների լվացման, հետախուզման, առգրավման և բռնագրավման մասին Եվրոպայի խորհրդի Կոնվենցիային, որի նպատակն է ծանր հանցագործությունների կանխարգելումը նման հանցագործությունների դեմ պայքարի միջազգային առաջանցիկ փորձի արդիական և արդյունավետ մեթոդներով:

Փողերի լվացման դեմ պայքարի համար անչափ կարևոր է սահմանել այն գործարքների շրջանակը, որոնց դեպքում պետք է հաշվետվություն ներկայացվի:

«Փողերի լվացման և ահաբեկչության դեմ պայքարի մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ «Պարտադիր տեղեկացման ենթակա գործարքի վերաբերյալ հաշվետվությունը տրամադրվում է հաշվետվություն տրամադրող հետևյալ անձանց կողմից՝ ըստ գործարքների որոշակի տեսակների և սահմանաչափերի, որոնք են՝

1) ֆինանսական հաստատությունների դեպքում՝ անկանխիկ գործարքներ, որոնց գումարը հավասար է կամ գերազանցում է 20 միլիոն դրամը, ինչպես նաև կանխիկի հետ կապված գործարքներ, որոնց գումարը հավասար է կամ գերազանցում է 5 միլիոն դրամը.

2) նոտարների, խաղատների, շահումով խաղերի, ներառյալ՝ ինտերնետ շահումով խաղերի, վիճակախաղերի կազմակերպիչների, իրավաբանական անձանց գրանցող պետական մարմնի (պետական ռեգիստրի), ինչպես նաև անշարժ գույքի պետական միասնական կադաստր վարող լիազոր մարմնի դեպքում՝ գործարքներ, որոնց գումարը հավասար է կամ գերազանցում է 20 միլիոն դրամը, բացառությամբ անշարժ գույքի առուվաճառքի գործարքների, որոնց դեպքում հաշվետվություն տրամադրվում է, եթե դրանց գումարը հավասար է կամ գերազանցում է 50 միլիոն դրամը: Սույն կետով սահմանված գործարքները կանխիկով իրականացվելու դեպ-

քում հաշվետվություն տրամադրվում է, եթե դրանց գումարը հավասար է կամ գերազանցում է 5 միլիոն դրամը:»:

Օրենքը հստակ սահմանում է իրավաբանական փաստերի այն շրջանակը, որոնց առաջանալը հանգեցնում է հաշվետվությունների տրամադրման պարտականության ծագմանը:

Կարևոր է նաև հաշվետու անձանց ու մարմինների շրջանակի որոշումը: Այդ հարցը կարգավորվում է Օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով:

Կարևոր է նաև կասկածելի գործարքի բնորոշումը: Ըստ օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 30-րդ կետի՝ դա այն գործարքն է կամ գործարար հարաբերությունը, այդ թվում՝ գործարքի կատարման կամ գործարար հարաբերության հաստատման փորձը, որի դեպքում կասկածվում է կամ բավարար հիմքեր կան կասկածելու, որ գույքը ստացվել է հանցավոր ճանապարհով կամ կապված է ահաբեկչության, ահաբեկչական գործողությունների, ահաբեկչական կազմակերպությունների կամ անհատ ահաբեկիչների կամ ահաբեկչությունը ֆինանսավորողների հետ կամ օգտագործվել է կամ առկա է մտադրություն այն օգտագործելու ահաբեկչության նպատակով կամ ահաբեկչական կազմակերպությունների կամ անհատ ահաբեկիչների կամ ահաբեկչությունը ֆինանսավորողների կողմից:

Ուշադրություն դարձրեք կասկածելի գործարքի բնորոշմանն ու հատկանիշներին:

Օրենքի 8-րդ գլուխը նախատեսում է նաև հաշվետվություն ներկայացնելու պարտականություն ունեցող անձանց պատասխանատվություն՝ օրենքի և դրա հիման վրա ընդունված իրավական ակտերի պահանջների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար:

Փորձեք մտաբերել Ձեր պրակտիկայում առկա դեպք, երբ կոռուպցիոն կամ կազմակերպված հանցագործության դեպքով հարուցված քրեական գործի շրջանակներում դիմել եք իրավական փոխօգնության:

Կոռուպցիայի և կազմակերպված հանցավորության դեմ պայքարում կարևոր գործիքակազմ է նաև միջազգային իրավական փոխօգնության գործիքակազմի օգտագործումը: Անչափ կարևոր է համապատասխան իրավական օգնության պայմանագրերի կնքում տարբեր երկրների միջև, ինչն իրավական հիմքեր է ստեղծում համագործակցության համար: Այդպիսի պայմանագրերի բացակայությունը բավականին բարդություններ է առաջացնում հակակոռուպցիոն պայքարի արդյունավետ իրականացման համար:

Այսպես, Կոռուպցիայի դեմ ՄԱԿ-ի կոնվենցիայի 46-րդ հոդվածի համաձայն՝

«1. Մասնակից պետությունները պետք է ամենալայն փոխադարձ իրավական օգնություն ցույց տան միմյանց՝ սույն Կոնվենցիայով ընդգրկած իրավախախտումների հետ կապված քննության, քրեական հետապնդման և դատաքննության գործում:

(…) [Փ]ոխադարձ իրավական օգնությունը կարող է հայցվել հետևյալ նպատակներից որևէ մեկով.

ա) վկայի ցուցմունքներ կամ առանձին անձանցից հայտարարություններ ստանալու.

բ) դատական փաստաթղթեր հանձնելու.

գ) խուզարկություն անցկացնելու և առգրավելու, ինչպես նաև գործառնությունները սառեցնելու.

դ) օբյեկտները և տեղանքի հատվածները զննելու.

ե) տեղեկատվություն, իրեղեն ապացույցներ և փորձագետների գնահատականներ տրամադրելու.

զ) համապատասխան փաստաթղթերի և նյութերի բնօրինակները կամ հաստատված պատճենները ներկայացնելու, ներառյալ կառավարական, բանկային, ֆինանսական, կորպորատիվ կամ առևտրային փաստաթղթերը.

է) հանցագործությունից ստացված եկամուտները, գույքը, հանցագործության կատարման գործիքները կամ այլ առարկաները բացահայտելու կամ դրան հետամուտ լինելու.

ը) հայցվող Մասնակից պետության մարմիններ համապատասխան անձանց կամավոր ներկայանալուն օժանդակելու.

թ) ցանկացած այլ տեսակի օգնություն ցույց տալու, որը չի հակասում հայցվող Մասնակից պետության ներքին օրենսդրությանը.

ժ) (...) հանցագործությունից ստացված եկամուտները բացահայտելու, սառեցնելու և հետամուտ լինելու.

ժա) (...) ակտիվներն առգրավելու նպատակներով»:

Հանցավոր ճանապարհով ձեռք բերված փողերի լվացման, հայտնաբերման և բռնագրավման մասին եվրոպական կոնվենցիան (1990թ.) ևս ուղղված է միջազգային համագործակցության աջակցմանը: Առանց այդպիսի աջակցության բարդ է ինչպես ֆինանսական կոռուպցիոն բնույթի, այնպես էլ անդրազգային հանցագործությունների քննությունը և բացահայտումը: Այն նախատեսված է օգնել պետություններին, նույնիսկ օրենսդրական իրավական կարգավորումների բացակայության պայմաններում:

Անհրաժեշտ է նաև ընդգծել, որ միջազգային համագործակցության նպատակներով՝ Կոնվենցիան նախատեսում է հանձնարարականներ՝ մյուս պետությանը համապատասխան տեղեկություններ տրամադրելու, քննությանն օգնելու, ապացույցներ ձեռք բերելուն աջակցելու առնչությամբ, նույնիսկ այն դեպքում, երբ բանկային գաղտնիքների բացահայտման, բանկային հաշվեհամարների սառեցման և գույքի բռնագրավման պահանջի հետ չկա համագործակցության լրացուցիչ պահանջ:

Իրավական փոխօգնության համատեքստում հետաքրքիր խնդիր է այլ պետության տարածքում ձեռք բերված ապացույցների օգտագործման թույլատրելիության հարցը:

Ուշադրություն դարձրեք ապացույցների օգտագործման թույլատրելիության առնչությամբ միջազգային պրակտիկայում ձևավորված մոտեցումներին:

Այս առնչությամբ միջազգային պրակտիկայում ձևավորվել են հետևյալ մոտեցումները՝

1. ներպետական մարմինն իրավասու չէ գնահատել օտարերկրյա պետության տարածքում ձեռք բերված ապացույցի թույլատրելիությունը, ինչը պետք է մեխանիկորեն ենթադրվի.
2. ներպետական մարմինն իրավասու է գնահատել օտարերկրյա պետության տարածքում ձեռք բերված ապացույցի թույլատրելիությունը՝ օտարերկրյա պետության օրենսդրությանը համապատասխան.
3. ներպետական մարմինն իրավասու է գնահատել օտարերկրյա պետության տարածքում ձեռք բերված ապացույցի թույլատրելիությունը՝ իր ներպետական օրենսդրությանը համապատասխան.
4. օտարերկրյա պետության տարածքում ձեռք բերված ապացույցի թույլատրելիությունը պետք է գնահատվի «արտաքին օբյեկտիվ» չափանիշի տեսանկյունից, ինչպիսին, օրինակ, կարող են լինել Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին Եվրոպական կոնվենցիան կամ Մարդու իրավունքների Եվրոպական դատարանի (այսուհետ՝ նաև Եվրոպական դատարան) նախադեպային իրավունքը.
5. նշված տարբերակների համակցված մոտեցումը:

ՀՀ գործող օրենսդրական կարգավորումների համատեքստում քրեական գործերով իրավական օգնության հետ կապված հարցերը կարգավորվում են ՀՀ գործող քրեական դատավարության օրենսգրքում: Սակայն ՀՀ նոր քրեական դատավարության օրենսգրքում նշված ինստիտուտն օրենսդրական կարգավորում չի ստացել, փոխարենը մշակվել է «Քրեական գործերով իրավական օգնության մասին» ՀՀ օրենքի նախագիծը:

ՀՂՈՒՄՆԵՐ

Հղումները նախատեսված են Ձեզ հետաքրքրող նյութերի մասին հավելյալ գիտելիքներ ստանալու համար:

1 2020թ.-ի ընթացքում կոռուպցիոն բնույթի հանցագործությունների քննության արդյունքների վերաբերյալ հաղորդում, հասանելի է՝
https://www.prosecutor.am/myfiles/files/pdf/korupcia-haxordum2020.pdf
(վերջին անգամ դիտվել է 26.01.2022թ.)

2 Combating Corruption in Singapore: What Can Be Learned?,
https://datascience.iq.harvard.edu/files/gov2126/files/quah_singapore.pdf
(վերջին անգամ դիտվել է 26.01.2022թ.)

3 https://www.icac.org.hk/en/about/history/index.html
(վերջին անգամ դիտվել է 26.01.2022թ.),
Hong Kong's Fight Against Corruption Has Lessons for Others,
https://carnegieendowment.org/hkjournal/PDF/2006_spring/wu.pdf
(վերջին անգամ դիտվել է 26.01.2022թ.);
Effective Measures to Combat Corruption in Hong Kong,
https://www.unafei.or.jp/publications/pdf/RS_No101/No101_23_VE_Kwok_1.pdf
(վերջին անգամ դիտվել է 26.01.2022թ.);
Fighting Corruption – The Hong Kong Experience,
http://tdri.or.th/wp-content/uploads/2013/04/auyeung.pdf
(վերջին անգամ դիտվել է 26.01.2022թ.)

4 https://www.u4.no/publications/best-practices-in-addressing-police-related-corruption
(վերջին անգամ դիտվել է 26.01.2022թ.);

https://www.u4.no/publications/the-rapid-economic-liberalisation-and-ruthless-fight-against-corruption-in-georgia
(վերջին անգամ դիտվել է 26.01.2022թ.)

5 Digest of Organized Crime Cases, A compilation of cases with commentaries and lessons learned,
https://www.unodc.org/documents/organized-crime/Digest_Organized_Crime.pdf
(վերջին անգամ դիտվել է 26.01.2022թ.)

ԲԱՌԱՐԱՆ

Այս հատվածում ներկայացված են դասի նյութին առնչվող առանցքային եզրույթները և դրանց բացատրությունները: Դրանք Ձեզ կօգնեն դասի նյութն ավելի հեշտ ընկալել: Եզրույթների բովանդակությունն ուշադրությամբ ուսումնասիրելու համար անհրաժեշտ է մոտ 15 րոպե:

ԱՆԴՐԱԶԳԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՎԱԾ ՀԱՆՑԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ — Կազմակերպված հանցավոր խմբերի հանցավոր գործունեություն է, եթե.

1. այն կատարվել է մեկից ավելի պետություններում.
2. այն կատարվել է մի պետությունում, բայց դրա նախապատրաստման, պլանավորման, ղեկավարման կամ վերահսկողության էական մասը տեղի է ունեցել այլ պետությունում.
3. այն կատարվել է մի պետությունում, բայց այնպիսի կազմակերպված հանցավոր խմբի մասնակցությամբ, որը հանցավոր գործունեություն է իրականացնում մեկից ավելի պետություններում, կամ
4. այն կատարվել է մի պետությունում, բայց դրա էական հետևանքները եղել են այլ պետությունում:

ԳՈՐԾԱՐԱՐ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆ — Հաճախորդին մատուցվող պարբերական ծառայություններ են, որոնք չեն սահմանափակվում մեկ կամ մի քանի միանգամյա գործարքներով:

ԿԱՍԿԱԾԵԼԻ ԳՈՐԾԱՐՔ — Գործարք կամ գործարար հարաբերություն, որի դեպքում «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» ՀՀ օրենքով, լիազոր մարմնի ուղեցույցներով, հաշվետվություն տրամադրող անձանց ներքին իրավական ակտերով սահմանված կամ այլ դեպքերում կասկածվում է, կամ բավարար հիմքեր կան կասկածելու, որ այդ գործարքում կամ գործարար հարաբերությունում ներառված գույքն ստացվել է հանցավոր ճանապարհով

կամ այդ գույքը կապված է ահաբեկչության ֆինանսավորման հետ, ինչպես նաև եթե ֆինանսական միջոցները կամ այլ գույքը կապված են, կամ առկա է մտադրություն դրանք օգտագործել ահաբեկչական կազմակերպությունների կամ անհատ ահաբեկիչների կողմից՝ ահաբեկչական նպատակներով:

ԿՈՌՈՒՊՑԻԱ — Անձնական կամ այլ շահադիտական նպատակով, տարբեր ձևերով արտահայտված (գործողությամբ կամ անգործությամբ) ի պաշտոնե տրված իշխանական լիազորությունների չարաշահումն է:

ԿՈՌՈՒՊՑԻՈՆ ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ — ՀՀ քրեական օրենսգրքին կից թիվ 1 հավելվածով նախատեսված հանցագործություններն են:

ՓՈՂԵՐԻ ԼՎԱՑՈՒՄ — Հանցավոր ճանապարհով ստացված գույքի փոխարկումը (կոնվերտացումը) կամ փոխանցումն է (եթե հայտնի է, որ այդ գույքն ստացվել է հանցավոր գործունեության արդյունքում), որը նպատակ է ունեցել թաքցնել կամ խեղաթյուրել այդ գույքի հանցավոր ծագումը կամ օժանդակել որևէ անձի, որպեսզի նա խուսափի իր կատարած հանցանքի համար պատասխանատվությունից, կամ գույքի իրական բնույթը, ծագման աղբյուրը, գտնվելու վայրը, տնօրինման եղանակը, տեղաշարժը, տեղաբաշխումը, իրավունքները կամ պատկանելությունը թաքցնելը կամ խեղաթյուրելը (եթե հայտնի է, որ այդ գույքն ստացվել է հանցավոր գործունեության արդյունքում) կամ գույք ձեռք բերելը կամ տիրապետելը կամ պահելը կամ օգտագործելը կամ տնօրինելը (եթե այդ գույքի ստացման պահին հայտնի էր, որ այն ստացվել է հանցավոր գործունեության արդյունքում):